Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

А. С. Пушкин

Цыгане

Ц. О. З. У

ГОСИЗДАТ

891.71
Պ-90

Ա.Ս.ՊՈՒՇԿԻՆ

ՍՄ44.87 k 1961 թ.

ԳՆՉՈՒՆԵՐ

Ա 3512
7007 489

ԴՆՉՈՒՆԵՐ

Բեսարաբիայում—խուռերն աղմուկով
Անդադար քոչում են գնչուները։
Յեվ ահա այսոր, մի գետակի քով,
Ննջել են, խփած հին վրանները։
Ուրախ ե նրանց իջևանն ինչպես
Ազատությունը։ Քունը անխռով
Բաց յերկընքի տակ, ուր վոր գորգերով
Ծածկած սայլերի անիվների մեջ
Կրակ են վառել ու շուրջը նստած
Վողջ ընտանիքը ճաշ ե պատրաստում։
Ձիերն արածում են անյեղծ դաշտում։
Ջեռնածու արջը ահա լուռ պառկած
Վրանի յետև, առանց շղթայի։
Աշխույժ ե հնչում տափաստանների
Միջում ամեն բան։—Յեվ ընտանեկան
Հոգսերով մարդիկ, վորոնք առտվան

Ծագից դեռ առաջ ճամբորդն պիտի
Ցեվ լերգը կանանց, և՛ ճիչը մանկանց,
Ցեվ զբրընդոցը շարժական սալի։
Բայց արդ՝ տիրում է այդ թափառական
Խմբին խոր քնի անդորրությունը.
Ցեվ տափաստանում լսվում են միայն
Ձիու խրխինջ ու շան կլանչյունը։
Շուրջը հանգիստ է, ինչպես գերեզման,
Կրակը հանգչում գետակի ափին.
Լուսավորում է լուսինը միայն
Ցերկնի բարձունքից—թափառախմբին։
Բայց մի վրանում չի քնել մի ծեր.
Նստած է հանգչող կրակի առաջ.
Տաքանում նրա ջերմությամբ վերջին,
Ցեվ լուռ՝ ծանրացած միտքը սեղեռել
Նայում է դաշտին՝ մուժի մեջ սառած։—
Նրա մանկամարդ դուստրը մի հատիկ
Գնացել է դաշտ—մենակ ման գալու,—
Սովոր է աղատ, համարձակ կյանքի։
Կվերադառնա։—Բայց արդ՝ ուշ է լուռ—
Խորին գիշեր է։—Թողնում է ցրտին
Լուսինն ամպերին հեռու յերկընքի։

Զեմֆիրան, սակայն, դեռ չի յերևում,
Սառչում է խղճուկ ճաշը ծերուկի։

Բայց ահա և նա։ Յետևիցն ահա
Մի յերիտասարդ մարդ է շտապում,
Ծերուկ գնչուին անծանոթ է նա։
«—Հայրիկ, ասում է աղջիկը խնդուն,—
Մեզ հյուր եմ բերում,—յես գտա նրան
Տափաստանի մեջ, բլուրի վրա.
Հրավիրեցի իջևանը մեր,
Ուզում է մեզ պես նա գնչու լինել.
Նա խույս է տվել որևնքի ձեռքից,
Կդառնամ նրան ընկերուհի յես,
Նրան Ալեքո անուն են տալիս.
Ուր վոր մենք գնանք՝ կհետևի մեզ»։

Ծերուցի

Ուրախ եմ։ Թող նա մինչ եղուց մնա
Հովանու ներքո մեր խեղճ վրանի.
Կամ թե՝ ավելի, թե սիրտ կունենա։
Ինչպես ուզում ես։ Այդպիսի բանի՝
Պատրաստ է—հացը, ոթևանն իմ հին,

Դալձիր դու մերը, վարժվիր խեղճության
Եվ ազատ կյանքին, շրջմոլիկ բախտին։
Մնա մեզ մոտ միշտ։ Իսկ առավոտյան
Ճանապարհ կընկնենք մեր մի սայլակով։
Բայց քեզ գործ է պետք, դնա, մտածիր,
Կամ յերկաթ ծեծիր, կամ յեղիր յերգող,
Կամ թե գյուղեգյուղ արջը մանր ածիր։

Աղեռն

Կմնամ ձեզ մոտ։

Զեմֆիրա

Նա ինն է, ինը,
Եվ ով կարող է ինձանից խլել։
Բայց ուշ է արդեն... Մատաղ լուսինը
Ծածկվեց, մուժը դաշտերն է կոխել։
Քունը ինձ արդեն հաղթահարում է։

Լույս է։ Ծերը լուռ շրջում է անվերջ
Դեռ քնածների վրանների մոտ։
«—Վեր կաց, Զեմֆիրա, արևը ծագեց,

Դու եվ վեր կաց, հյուր, լույս ե, առավոտ,
Վեր կացեք, վորդիք, փափկության
մահճից»։
Յեվ դուրս են թափվում ամենքն
աղմուկով—
Հին վրանների լռության միջից։
Յեվ սայլակները՝ պատրաստ իրար քով,
Իրար հետ հանկարծ նետվում են առաջ,
Կտրում ամայի դաշտերը անծիր։
Յերեխաներին եշերը առած,
Խուրջինների մեջ բաց, ինչպես կծիկ։
Ամուսին, յեղբայր, կանայք, աղջկերք,
Յեվ ծեր, և մանուկ մեկտեղ, սրտախինդ,
Ծիծաղ, աղաղակ, գնչուական յերգ,
Արջի մռնչուն, շղթայի շռինդ,
Անհամբեր շարժում ու զընդուն ձայներ,
Նախշուն քուրջերը հագած ու կապած—
Կիսամերկ ծերեր ու ժիր մանուկներ,
Հաջոց ու ձայնը զրույցի կամաց,
Սայլերի ճռինչ, և ամենը այս
Խառնիխուռն, անկարգ և աններդաշնակ,
Բայց այնքան ուրախ, կենդանի ու պարզ։

Յեվ այնքան ոտար՝ մեր մեռած, անկյանք
Սրտին՝ այդ ոտար տոնը ցնծալի,
Վոնց ստրուկների յերգը տաղտկալի։

Յերիտասարդը նետում է աչքը.
Դեպի դիմացի դաշտերը սամա—
Յեվ իր տխրության գաղտնիքը անլուր
Չի կարող պարզել ինքը իր համար։
Այժմ իր հետն է սևաչ Զեմֆիրան,
Այժմ ազատ մարդ է ինքն աշխարհում.
Յեվ իր վերևում արևն անվարան
Կեսորվա շքեղ շուքով է փայլում։
Ինչու՞ յե սիրտը դողում վշտավառ,
Ի՞նչ հոգս է նրան ճնշում գաղտնաբար։
Թռչունն յերբեք չի իմանում
Հոգնություն և հոգս անմար.
Յեվ խնամքով նա չի հյուսում
Մշտական բույն իր համար.
Ու ննջում է ծառի վոստին,
Ի՞նչ փույթ թե պարտք է մեկին,
Ու յերգում է նա վերստին—

Արեգակի վառ ծեգին։
Հաջորդում է սիրուն գարնան
Ամառ այրող ու կիզիչ.
Բերում է մուժ ու շունչը ձյան—
Ուշ աշունը ավերիչ.
Մարդկանց համար խիստ տխուր է,
Ցերը թռչուններն հեռանան,
Զվեն տաքուկ յերկրները,
Մինչև գալուստը գարնան։
Յեվ ինչպես անրուլյն թռչունը անհոգ
Նա—այդ թափառիկ չվողը անտուն
Զուներ իր բույնը, և չուներ վոչ վոք,
Յեվ վոչ մի բանի նա չեր հաստատվում.
Բաց եյին ճամբեք միշտ նրա առաջ,
Ամենուր նա իր քնատեղն ուներ.
Զարթնում եր միշտ վաղ, դեռ ծեգը չառած,
Որն իր գարձընում աստվածանվեր.
Կյանքի տագնապը չեր եվ խռովում
Նրա սրտի այն մեղկությունը մեղմ,
Ու մերթ կախարդող փառքի նման ջերմ,
Հեռավոր աստղն եր նրան գրավում.
Յերբեմն փայլը մեծաճոխ կյանքի—

Հուրհրատում էր աչքերում նրա.
Քիչ չեր պատահում, վոր հուր կայծակի
Ամպը չգոռար չոր գլխի վրա.
Բայց անտարբեր էր նա և՝ շանթի դեմ,
Յեվ արևի տակ—հանգիստ էր քնում.
Ապրում էր ազատ և չեր ընդունում
Իշխանությունը կույր բախտի դժվեմ։
Բայց, ո՜, աստվա՜ծ իմ, նրա հետ՝ անհագ
Վոնց եյին խաղում կրքերը ուժգին.
Վոնց եյին յեռում մաշված կրծքի տակ,
Կատաղի թափով ծփուն, անհանգիստ։
Թվում է յերկար կմնան հանգած։
Վո՛չ, կտեսնես դու—կդարթնեն հանկարծ։

Զեմքիրա

Ասա, իմ ընկեր, չե՞ս ափսոսում դու—
Ինչ վոր թողել ես մի որ մշտապես։

Գլեբո

Ի՞նչ եմ թողել յես։

ԶԵՄՔԻՐԱ

Հասկանում ես դու,—
Քաղաքն ու քեզ միշտ հարազատ մարդուն։

ԱԼԵՓՈ

Ի՞նչը ափսոսամ։ Գիտնայիր թե վոր
Յերևակայել, հասկանալ մի որ
Ստրկությունը այդ քաղաքների,
Ուր ցանկապատված բյուր մարդիկ անհոգ,
Զուրկ առավոտյան գովից թանկագին.
Կարոտ մարգերի կենարար բույրի,
Ուր սիրո համար ամաչում են լոկ,
Ծախում են և՛ միտք, և՛ ազատություն,
Յերկրպագում են չնչին կուռքերի,
Յեվ փողով միայն շլթա յեն գնում։
Ի՞նչ եմ թողել յես—Դավաճանություն,
Դաժան ամբոխի անմիտ հալածանք,
Խայտառամուկ ու խայտառակ մի կյանք.
Տիմար ամբոխի հոտը պլպլան։

ԶԵՄՔԻՐԱ

Բայց այնտեղ կան մեծ տուն ու ապարանք,

Նախշուն գորգեր կան այնտեղ- -քաղաքում.
Ծնճուղք, կերուխում, խաղ ու խրախճանք,
Աղջկանց զարդեր հարուստ, գույնզգույն։

Ալեքո

Ի՞նչ է քաղաքի խինդը—բարեկամ,
Վորտեղ սեր չկա՝ չկա և խնդություն։
Իսկ աղջիկները... Դու հազար անգամ
Նրանցից սիրուն, գեղեցիկ ես դու—
Առանց մարգարտի, առանց մանյակի։
Մի փոխվիր, հոգիս։ Դու լավ ես այսպես,
Իսկ յես... Չեմ ուզում վոչինչ կրկնակի.
Լոկ մի խոշ ունեմ՝ միայն սիրել քեզ,—
Մոռանալ ժամերն իմ աքսորանքի...

Ֆերուճի

Դու սիրում ես մեզ, ծնված ես թեկուզ
Ժողովրդի մեջ ազատ ու շռայլ.
Բայց ով ծնվել է մեղկության գրկում՝
Ազատությունը չի սիրի յերկար։
Պահվում է մեր մեջ ավանդություն մի,
Վոր մի չար արքա աքսորեց մեզ մոտ

Հարավից մի մարդ[1]։ (Բայց անունն հիմի
Իմաստուն մարդու այն սիրակարոտ՝
Ձեմ մտաբերում, գիտեցի առաջ)։
Թեպետ ծեր էր նա,—տարիքը առած,
Բայց զվարթ էր միշտ և հոգով անբիծ,
Նա ուներ իր մեջ ձիրք կախարդական,
Ու ձայն՝ կարկաչուն աղբյուրի ձայնից.
Նրան ամենքը սիրեցին այնքան։
Մենակ ապրում էր Դանուբի ափին
Յեվ չէր նեղացնում վոչ մեկի, այսպես,
Պատմում էր շքեղ հեքյաթներ անգին
Յեվ միամիտ էր յերեխայի պես.
Յերեխայի պես թույլ էր ման գալիս,
Յեվ նրա համար և ձուկ, և գազան
Ուրիշներն եյին վորսում ու տալիս։
Յեվ յերբ սառչում էր գետը գաղաղած,
Սուլում, մընչում մրրիկը ձմռան,
Մարդիկ գազանի մորթիով խսկուն
Ծածկում եյին այդ ծերին սրբազան։
Բայց չէր հաշտվում կյանքի հետ անդուն.
Յեվ թափառում էր աղքատ ու նիհար,

1) Պուշկինն ակնարկում է հռոմեացի հռչակավոր բանաստեղծ Ովիդիոս Նազոնին։

7007489 A 1/3512

Նա ասում էր, թե աստվածը հզոր
Պատժել է իրեն մի մեղքի համար...
Ցեվ մնում է դեռ փրկության հուսով.
Բայց միշտ տխրագին ու տրտում ու խեղճ,
Դանուբի ափին, ծանր մտքերով,
Լուռ թափառում էր—արցունքն աչքի մեջ,
Իր հայրենիքը մտաբերելով։—
Ցեվ նա կտակեց մեռնելու ժամին՝
Վոր տանեն վոսկերքն—իր հայրենական
Հարավի հողում թաղելու մի որ.
Վորոնք չպիտի հանդիստ մնային
Ոտար աշխարհում այս անհյուրընկալ։

Պլեբո

Այդպես է բախտը քո վորդիների,
Ո՜, Հռոմ, ո, մեծ, հաղթական յերկիր։
Դու աստվածների ու սիրո յերգիչ.
Ասա ինձ, ասա իմաստը փառքի,—
Շիրմի խուլ թնդյունն, կամ հպարտությունն—
Վորը սերնդից սերունդ է անցնում,
Ցեվ կամ թե ծխով լցված վրանում
Վայրի գնչուի պարզուկ պատմությունն։

Յեկու ամառ անց։ Թափառումներով
Անցնում է գնչու բազմությունը միշտ
Յեվ ամենուրեք գտնում է սիրով
Հյուրասիրություն ու քաղցր հանդիստ.
Աբհամարհելով լուսավորության
Ամեն մի կապանք, Ալեքոն անոգ
Ապրում է որերն իր պանդխտության
Գնչուների պես անցավ ու անհոգ։
Դարձել է նա մի կատարյալ գնչու.
Յեվ վոչ ցավում է և վոչ ափսոսում
Ներկա շրջմոլիկ որերն իր անգին.
Նույնն ե, չի փոխվել, և նրանց միջում
Չի հիշում նույնիսկ որերը նախկին,
Սիրում է նրանց գիշերն անհուզում,
Հրապույրները ծույլ գնչուների,
Նրանց աղքատիկ, բայց հնչուն լեզուն.
Սիրում է արջին իր՝ բնից փախած,
Վրանի սովոր այդ բրդոտ հյուրին,
Վոր ստեպների ճամպի յեզերքին
Մոլգավ գյուղերի մոտերքում, առաջ՝
Յելնում է ծանր իր արջապարին։—
Ու մոնչում է ձայնով ահալի,

Կրծելով անվերջ շղթան ճանճրալի։
Կոթնած ճոկանին իր ճամբորդական՝
Զարկում է ծերը չոր դավի վրա,
Ալեքսն՝ արջն է պար ածում հլու,
Փողն հավաքում է սեվաչ Զեմֆիրան,
Նրանցից, վորոնք սիրով են տալու։
Գիշերն հասնում է, նրանք յերեքով
Նորհաս ցորենն են կրակին խաշում։
Քնում է ծերը լռության ներքո,
Անդորը է չոքում վրանի մուժում։

Գարնան արևի ջերմության ներքո
Տաքացնում է ծերն իր արյունը պաղ,
Աղջիկն յերգում է որորոցի քով,
Ալեքսն գցում իր գույնը դանդաղ։

Զեմֆիրա

Իմ ծեր մարդ, անեղ մարդ,
Մորթիր ինձ, այրիր ինձ,
Զեմ վախում. յես հաստատ—
Վո՛չ սրից, վո՛չ հրից։

Քեզ շատ եմ յես ատում,
Քեզ արհամարհում եմ,
Ուրիշին եմ սիրում,
Սիրելով կմեռնեմ։

Ալեքո

Լռիր։ Քո յերգը զզվացնում է ինձ,
Չեմ սիրում նման վայրենի յերգեր։

Զեմֆիրա

Չես սիրում։ Ե, լավ, մի սիրի, ինձ ինչ,
Յես ել միմիայն ինձ համար կերգեմ։—
Մորթիր ինձ, այրիր ինձ,
Վոչինչ չեմ ասի քեզ,
Իմ ծեր մարդ, ահեղ մարդ,
Դժվար թե ճանաչես։

Թարմ է նա և ըմբոստ,
Ամառ է ու գարուն,
Ջահել է ու խանդոտ,
Ինձ շատ է նա սիրում։

Վոնց եյի շոյում յես
Նրան լուռ գիշերին,
Վոնց եյինք ծիծաղում
Քո ճերմակ մաղերին։

Ալեքո

Լռիր, Զեմֆիրա, հերիք է, լռիր։

Զեմֆիրա

Դու հասկացար իմ այս յերգի միտքը։

Ալեքո

Զեմֆիրա...

Զեմֆիրա

Կուզես բարկացիր։
Քեզ վրա յեմ յես յերգում այս յերգը։
(Գնում է և յերգում՝ «Իմ ծեր մարդ» և այլն)։

Ծերունի

Այդպես. այս յերգը հիշում եմ համառ,
Բայց ով հնարեց այս յերգը յերկրում,
Կյանքին զվարճանք, խինդ տալու համար

Մարդիկն այդ յերգը վաղուց են յերգում։
Յերբ վոր Կազուլի տափաստանում լայն
Թափառում էյինք, ձմեռվա որով
Յերգում եր յերգն այս իմ Մարիուլան,
Կրակի մոտ աղջկանս մեղմ որորելով։
Իմ մտքի միջում տարիներն անցած
Ժամ առ ժամ մթնում, կորչում են անվերջ.
Բայց յերգն այս ահա վաղուց մնացած
Խորն է նստել իմ հիշողության մեջ։

Շուրջը խաղաղ է, լուսինը սիրուն՝
Զուգված բազմել է կապույտ լազուրում.
Զեմֆիրան՝ քնած հորն է արթնացնում.—
«—Ո՛, հայր իմ, վեր կաց, Ալեքսն քնում
Տես ինչպես ծանրը շնչում է տնքում,
Յեվ հառաչում է, և լուռ հեկեկում»։

Փերուզի

Թող նրան հանգիստ, մի դպչիր նրան.
Մի ավանդություն կա հին, ռուսական,
Տնային վոգին դիշերումն արթուն՝
Խեղդում է շունչը քնացող մարդու։

Յեվ դեռ չծագած լույսն առավոտի՝
Փախչում է իսկույն։ Նատիր ինձ մոտիկ։

ԶԵՄՔԻՐԱ

Հայր իմ, լսիր, իմ անունն է տալիս։

ԾԵՐՈՒՆԻ

Նա փնտռում է քեզ նաև յերազում,
Աշխարհից նրան թանգ ես ավելի։

ԶԵՄՔԻՐԱ

Սառել է նրա սերն իմ սրտի մեջ,
Իմ սիրտը հիմա այլ տենչ է հուզում։
Յես արդեն... Բայց դու չես լսում միթե,
Ուրիշ անուն է նա շրշում թեթև։

ԾԵՐՈՒՆԻ

Իսկ ում անունը։

ԶԵՄՔԻՐԱ

Լսում ես նրա տնքոցն անհատնում,
Յեվ առաջների կրճատոցը սուր,
Սարսափելի յես։ Կարթնացնեմ իսկույն։

Թերուցի

Շատ իզուր։

Իզուր մի քշիր գիշերվա վոգուն,
Ինքը կգնա։

Զեմքիրա

Նա շուտ յեկավ, տես,—
Զարթնեց, կանչում է իր մոտ, ահա յես
Գնում եմ։ Բնիր։ Դե մնաս բարով։

Պլեհո

Դու՝ վճռաեղ եյիր։

Զեմքիրա

Հորս մոտ եյի։
Շատ չարչարվեցիր դու այս գիշերով.
Ինչ վոր վոգի քեզ տանջում եր կարծես.
Դու ինձ վախեցրիր։ Բո աստմները
Կրճատում եյին։ Ու լսեցի վոր,
Կանչում եյիր ինձ։

Գլեհո

Տեսա անավոր
Յերազ քեզ վրա, իբր մեր միջև...
Անավոր յերազ, և թռա քնից...

ԶեմՔիրա

Մի հավատա դու սուտ յերազներին։

Գլեհո

Ախ, չեմ հավատում յես վոչ մի բանի՝
Վոչ յերազներին, վոչ խոստումներին,
Յեվ չեմ հավատում անգամ քո սրտին։

Ծերունի

Դու, յերիտասարդ ասա, ինչու յես
Տանջվում, հառաչում ամբողջ ժամերով.
Մարդիկ ազատ են, մեզ մոտ, տեսնում ես,
Պայծառ յերկինք կա ու սիրուն կանայք։
Զուր ե, կարոտը մարդ ե կործանում։

Գլեհո

Հայր իմ, ԶեմՔիրան ել ինձ չի սիրում։

Գերուհի

Քեզ հանգիստ պահիր, նա մանուկ է դեռ.
Զուր ես վրդովում քո սիրտը խաղաղ.
Գիտեմ, սիրում ես նրանից ավել,
Կինը սիրում է սրտի հետ խաղալ։
Զվարթ հայացքով նայիր յերկնքին,
Այնտեղ շրջում է լուսինը—աղատ,
Իր լույսն հավասար տալով ամենքին.
Յեվ աստղն ու ամպը նրան հարազատ։—
Տես, ամպին ահա աչքով է անում,
Նրան զվարթուն փայլեր է տալիս.
Հիմա ուրիշի խորքն է նա գնում,
Այսպես փոխվելով՝ նա ման է դալիս։
Մի թե հնար է լուսնին յերկնքում
Ասել թե՝ անշարժ մի կետում կանգնիր,
Զահել աղջիկն ել այդպես է կյանքում,
Նրան՝ ով կասի թե՝ մեկին սիրիր։
Քեզ հանգիստ պահիր։

Ալեքս

Ինչպես եր սիրում։
Յեվ ինչ քնքշությամբ, ինձ խոնարհելով,

Խոր լռության մեջ, խաղաղ գիշերում,
Իր սիրաբորբոք քչփչոցներով
Սեր էր խոստանում ինձ յերանելի.
Ինչպիսի ուրախ թոթովանքներով,
Իր համբույրներով ջերմ ու դյութալի
Նա մի վայրկյանում գիտեր փարատել
Վրաս ծանրացած և՛ վիշտ, և՛ թախիծ,
Հիմա Զեմֆիրան այնպես է սառել,
Յեվ իմ Զեմֆիրան էլ չի սիրում ինձ։

Փերուզի

Լսիր, պատմում եմ քեզ համար մի հին
Իմ գլխով անցած դեպք սովորական.
Վաղուց, շատ վաղուց, յերբ վոր Դանուբին
Ձեր սպառնացել Մոսկովն հաղթական,
(Տեսնում ես, ինչպես վերքս նորացավ
Յեվ սիրտս պատեց տխրություն ու ցավ),
Վախենում եյինք թուրքի սուլթանից,
Իսկ Բուլչակ փաշան այն ժամանակ դեռ
Աշտարակներից Աքերմանի
Հսկում էր։ Իսկ յես՝ վառվռուն ջահել,
Յեռում էր սիրտս։ Իմ գլխի վրա

Զկար և վոչ մի սպիտակած թել.
Յես ուրախ եյի և այնքան ուրախ.
Յեվ ահա սիրուն կանանց մեջ հանկարծ
Հայտնվեց մեկը,—չքնաղ ու պայծառ,
Ինձ համար լույս եր նա արեգական,
Նա գարձավ կինը ս, ու յերջանկացա։

Բայց, ավաղ, շատպ անցավ ինձ համար
Ջահելությունը ս,—հանդչող աստղի պես։
Ա՜խ, դու, ո, քաղցը սիրո վառ վայրկյան՝
Թռար շատ շատպ։—Մի տարի միայն
Սիրեց ինձ կինը ս—իմ Մարիուլան։

Մի որ կադուլյան ջրերի վրա
Մենք հանդիպեցինք այլ գնչուների.
Ուրիշ գնչուներ խփեցին վրան
Սարի տակ, մեզ մոտ, մեր վրաններրի։
Մենք յերկու գիշեր յեղանք միասին,
Յերրորդ գիշերը նրանք հեռացան.
Ծծկեր աղջիկան թողնելով անսիրտ
Իմ Մարիուլան նրանց միացավ։—
Քնած եյի յես. լուսածեգին յերբ

Զարթնեցի, տեսնեմ՝ կինը կողքիս չի,
Փնտռում եմ, կանչում, ընկած քար ու
ծերպ,
Խեղդում է արցունքն աղջկաս,—խեղճին։
Ցես էլ լաց յեղա։ Այդ ժամանակից
Կինը մեկից մեկ ընկավ իմ աչքից.
Այդ որվանից էլ իմ մտքով չանցավ
Մենակ մնացի ու չառա նոր կին,
Որերը ազատ, միայնակ անցան։

Աղեռ

Բայց ինչու համար չշտապեցիր դու
Այդ խարդախ մարդկանց յետևից իսկույն,
Բռնեյիր նրանց, մինչև դաստակը—
Սիրտը խրեյիր դաշույնդ հատու։

Թերուճի

Ինչու։ Ազատ են հավքերը ջահել։
Այն ինչ ուժով է սիրտը զսպվում.
Հերթով է տրվում ուրախությունն էլ.
Յեղածը յերբեք էլ չի կրկնվում։

Գլեոն

Յես այդպիսին չեմ։ Յես առանց կռվի
Չեմ հրաժարվի իմ իրավունքից.
Վրեժ կլուծեմ, ձեռք քաշած կյանքից,
Թեկուզ թշնամուս անդունդին ծովի
Բնած տեսնեմ յես—կգտնեմ նրան.
Յերդվում եմ, վոր իմ վոտքը կհրի
Իմ չար թշնամուն, և չի յերերա,
Կհրի ծովի խորքը ժանտալի։
Կհրի նրան։ Յեվ սարսափը վողջ
Նրա զարթնումի կընդմիջեյի յես
Իմ ծիծաղովը չար ու դժներես.
Նրա անկումի թնդյունը ամբողջ
Ականջ կանեյի քեզի անողի պես։

Ցերիտասարդ գնչու

Թող ինձ, թող գոնե համբուրեմ մեկ ել։

Զեմֆիրա

Հերիք է։ Մարդս խանդոտ է ու չար։

ԳՆՅՈՒ

Մի անգամ։ Գնթ այս բաժանման համար։

ԶԵՄՔԻՐԱ

Հեռացիր, քանի մարդս չի յեկել։

ԳՆՅՈՒ

Ասա, յերբ պլոսի տեսնելիանք նորից։

ԶԵՄՔԻՐԱ

Այսոր, յերբ ծագի լուսինն յերկընքում,
Բլուրի վրա, հին շիրմաքարին։

ԳՆՅՈՒ

Զի գալու, վոչ, վոչ, խաբում ե նա ինձ։

ԶԵՄՔԻՐԱ

Փախիր, ահա նա։ Կգամ, սիրելիս։

Ալեքսոն քնած տեսնում ե ահա
Անցնում են գնմից խառն յերազներ,

Ճչում է մթնում, և ձեռքով իրա
Տեղն սկսում է իրարով խառնել.
Բայց տարածած իր ձեռքը միմիայն
Ընկնում է դատարկ վերմակի վրա,
Ցավ կողքին չկա կինը՝ Զեմֆիրան...
Նա վեր է թռչում, ականջ է դնում
Սարսափով լցված։ Շուրջը սառն ու լուռ.
Մարմնով անցնում է տաք ու պաղ
սարսուռ.

Ապա վրանից շտապ դուրս գնում
Կատաղի դեմքով,—շուրջը սայլերի
Վորոնում է, բայց լռում է ամեն ինչ.
Ամպի տակ մտավ և լուսինը ջինջ,
Միայն լույսի տակ աղոտ աստղերի
Տեսնում է հետքեր, վորը հեռանում,
Տանում է ահա լուռ բլուրն ի վեր,
Ցավ նա գնում է քայլով անհամբեր,
Ուր չարագուշակ հետքերն են տանում։

Ճամբի յեզրին մի դերեզմանատեղ
Սպիտակին է տալիս, և ահա
Հոլնած վոտքերը տանում են այնտեղ,

Նախազգացում սրտի մեջ պահած.
Ծնոտը կափկափ, ծնկները յերկար—
Գնում է... Հանկարծ, յերգ է արդյոք,
Տեսնում է անա սովերներ մի զույգ,
Շշուկ է լսում նա սիրաբորբոք
Ահա՝ շիբիմի վրա փառազուրկ։

Առաջին ձայն

Դե, ժամանակն է։

Ցերկրորդ ձայն

Դեռ կցց։

Առաջին ձայն

Հոգին, հերիք է։

Ցերկրորդ ձայն

Վա՛խ, վա՛խ, մեռա դեռ մինչև լուսաբաց։

Առաջին ձայն

Ո՞ւշ է, հասկացիր։

Ցերկրորդ ձայն

Վախով ես սիրում։

Մի վայրկյան միայն։

Առաջին ձայն

Ինձ կկործանես։

Ցերկրորդ ձայն

Մի վայրկյան միայն։

Առաջին ձայն

Ցեթե առանց ինձ
դարձնի իմ մարդը...

Ալեքո

Զարձնել եմ արդեն.
Ե՞յ, մի փախչի, կնոջ։ Պետք չի շտապել։
Այս գերեզմանը շատ է հարմար ձեզ։

Զեմֆիրա

Փախիր, սիրելիս, շուտ, ազատիր քեզ։

Սլեթո

Կանգնիր։

Եյ, ուր ես փախչում դու սիրուն Ջահել։
Պառկիր։
(Դանակը խրում է նրա կուրծքը)։

ԶեմՔիրա

Ալեքո։

Գնչու.

Մեռնում եմ։

ԶեմՔիրա

Դու սպանեցիր նրան, Ալեքո։
Դու թաթախված ես նրա արյան մեջ։
Ո, այս ինչ արիր։

Սլեթո

Վոչինչ։

Այժմ նրա վառ սերը շնչիր։

ԶեմՔիրա

Վոչ, բավական է. չեմ վախենում յես.

Արհամարհում եմ սպառնալիքդդ։
Այս վոճրի համար — անիծում եմ քեզ։

Ալեքո

Մեռիր և ինքդդ։

(Սպանում է նրան)

Զեմֆիրա

Կմեռնեմ սիրելով։

Արևելքն արդեն բացվում է շիկնում,
Ալեքոն, սակայն, այն կողմը ելքի,
Զեռքի մեջ պահած դաշույնն արյունոտ,
Մենակ նստած է տապանաքարին։
Իր առաջն ընկած դիակ կա յերկու,
Մարդասպանի դեմքն՝ ահ ունի լռին,
Իսկ գնչուներին պատել է յերկյուղ,
Կանգնել են վոմանք՝ հուզմունքով խորին,
Վոմանք յերկուսի շիրիմն են փորում,
Սգաձայն լացով անցնում են կանայք
Յեվ մեռածների աչքերն համբուրում։

Միայն ծերունին նստել է մենակ
Նայում իր սիրած անշունչ աղջկան՝
Լուռ անշարժության խորունկ թախիծով,
Մարդիկ դիակները ահա վեր առան
Հողին հանձնեցին խորին կսկիծով։
Ալեքոն նրանց նայում էր հեռվից։
Յերբ վերջին հողը թափվեց փոսի մեջ,
Նա լուռ վեր կացավ իր նստած տեղից,
Բայց մի քայլ չարած՝ անուժ գլորվեց
Խոտերի վրա՝ տապանաքարից...
Այնժամ ծերունին խիստ՝ ասավ այսպես,—
«—Թող մեզ, գոռող մարդ, գնա, հեռացիր,
Մենք վայրենի յենք, որենք չկա մեզ,—
Վոչ սպանում ենք, վոչ կապում, կախում,
Պետք չէ մեզ արյուն, ու ձայն տնքոցի։
Մարդասպանի հետ ապրել չենք ուզում։
Դու աղատ կյանքի համար չես ծնվել,
Յերբ ուզում ես դու լոկ աղատ լինել։
Սարսափ կբերի քո ձայնն այսուհետ։
Մենք վախկոտներ ենք, բայց հոգով բարի,
Դու չար, համարձակ։ Հեռացիր, թող մեզ,
Դե մնաս բարով։ Գնա, տեր ընդ քեզ։

Ասաց ծերունին և աղմուկներով
Թափառախումբը վեր կացավ արագ
Սարսափի հովից խլուզն քոչելով,
Ու կորավ հեռվում, մշուշների տակ.
Միայն մի սայլակ մնաց իր տեղում
Անշարժ, ծածկված քրքրված գորգով.
Որհասի՝ գալիք վտանգի ներքո.
Անպես, ինչպես վոր ցուրտ մառախուղում,
Ամեռից առաջ ու խոնավ, ու թեն
Ուշ աշնան դաշտից բարձրանում և վեր
Կոունկի յերամն աղաղակներով,
Վերահաս ցրտի բերան մնացած,
Ու չվում դեպի մշտաջերմ հարավ,
Թողնելով մենակ, խոցված կապարով,
Մեկն իր յերամից—թեվը քաշ արած։
Հասավ գիշերը, և մութ սայլի մոտ
Չկար վոչ մի մարդ, վոր կրակ աներ,
Չկար վոչ մի մարդ, վոր մինչ առավոտ
Նրա ծածկի տակ տեսներ յերազներ։

ՎԵՐՋԵՐԳ

Իմ մշուշապատ հիշողության մեջ,
Ցերգի կախարդող հղորությամբ լի՝
Կենդանանում են տեսիլներ անշեջ
Մերթ պայծառ ու մերթ թախծոտ որերի։
Այն յերկրում, ուր վոր պատերազմական
Ահեղ թնդյուն կար ու խոլ աղաղակ,
Ուր վոր տիրակալ ձայնը ռուսական
Հասնում եր մինչև Ստամբուլ քաղաք,
Ուր վոր հին արծիվը յերկգլխանի
Աղմկում եր և փառքով փաղփաղում՝
Հանդիպեցի յես տափաստաններին
Վրայից անցած բանակատեղում
Խաղաղ սայլերին խեղճ գնչուների,—
Ազատության այդ մեղմ զավակներին։

Բայց յերջանկություն չկա և ձեր մեջ,
Ո, դուք բնության խղճուկ զավակներ,
Ցեվ ձեր տրորված վրաններին մերձ
Ապրում են միայն տանջող յերազներ.
Ցեվ հարկերը իսկ ձեր թափառական

Զերծ չեն փորձանքից չար ու անողոք,
Ամենուր կրքերն են որհասական,
Յեվ բախտի զարկից՝ ազատ չի վոչ վոք։

1824

Թարգ.՝ Ս. Տարոնցի
Պատ. խմբագիր՝ Ա. Վշտունի
Տիտղոսաթերթը՝ Հ. Շավարշի
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Հրատ. 3964
Գլավլիտի լիազոր Կ—4464,
Պատվեր 1532, տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 14 դեկտ., 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 2 հունվարի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Երևան, II Կոնդանցի, 4

Пров. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0037800

45

A I 3512

Սկզ
օրինակ